«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 5
28.11.2025թ.

1. ՀԱԱՀ 95-ամյակի կապակցությամբ համալսարանի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներին պատվոգրերի և շնորհակալագրերի հանձնում

Ակտիվ համագործակցության և համալսարանի առաջընթացին նպաստելու համար շնորհակալագրեր հանձնվեցին ՀԱԱՀ արդյունաբերական խորհուրդների ստորև ներկայացված անդամներին:

- Ալբերտ Հարությունի Ներսիսյան՝ «Պռոշյանի կոնյակի գործարան»-ի գլխավոր տեխնոլոգ,
- Տիգրան Լյուդվիգի Խաչատրյան՝ «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ»-ի գլխավոր կոնյակագործ,
- Արեն Աշոտի Զարգարյան՝ «Երևանի գարեջուր» ՓԲԸ խմորման և հնեցման արտադրամասի պետ,
- Հայկուշ Գուրգենի Բատիկյան՝ «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ Որակի կառավարիչ և ուսումնական կենտրոնի ղեկավար:

Արդյունավետ համագործակցության և համալսարանի առաջընթացին նպաստելու համար շնորհակալագրեր հանձնվեցին նաև ՀԱԱՀ աշխատանքային կիսամյակի սկզբունքով արտադրական պրակտիկայի փորձուսուցման գործընկեր կազմակերպություններին:

- ՀՀ Կադաստրի կոմիտեի ներքին վերահսկողության վարչություն
- «Մասիս տոբակո» ՍՊԸ
- Քաղաքաշինության կոմիտեի շինարարության վարչություն
- «Մելիորացիա» ՓԲԸ
- «Ա.Կ. Գրուպ» ՍՊԸ
- Թալին ՋՕԸ
- Աշտարակ ՋՕԸ
- «Գեոդեզիստների և հողաշինարարների համահայկական միություն» ՀԿ
- «Թամարա» ՍՊԸ
- «Անի և Թամարա» ՍՊԸ
- «Արաքս թռչնաֆաբրիկա» ՓԲԸ
- «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ
- «Սպայկա» ՍՊԸ
- «Գրանդ Քենդի» ՍՊԸ
- «Երևանի շոկոլադի գործարան» ՓԲԸ
- «Դուստր Մարիաննա» ՍՊԸ

- «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ
- «Ցարիցինո» մսամթերք արտադրող ընկերություն ՍՊԸ
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
- «Արարատ» գինու գործարան ՍՊԸ
- ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայություն
- ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ
- Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի Գիտական կենտրոն ՊՈԱԿ
- ՀՀ ԷՆ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ
- «ԱՌԼԵԱՄԴՈՒՌ» ՍՊԸ
- «Եվրոթերմ» ՓԲԸ
- «Արմենիա մսամթերք» ՍՊԸ
- «Այգ գրուպ» ՍՊԸ
- «Ագրո մենենջմենթ» ՍՊԸ
- «Միջնաբերդ Ալկո» ՍՊԸ

2. ՀԱԱՀ Գիտական խորհրդի 2025 սեպտեմբերի 4-ի նիստի հանձնարարականների կատարողականի վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

3. ՀԱԱՀ Միջազգային կապերի դեպարտամենտի 2024–2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ

3.1. Ընդունել ի գիտություն:

3.2. Հանձնարարել ՄԿԴ պետ Գ. Համբարձումյանին.

- սեղմ ժամկետում վերանայել ՀԱԱՀ միջազգային ծրագրերի մրցույթների կազմակերպման և անցկացման ընթացակարգը և մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը Գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել ընթացակարգի բարելավման նախագիծ,
- մինչև ս.թ. դեկտեմբերի 2-ը ՀԱԱՀ բոլոր ստորաբաժանումներին ներկայացնել կուրս կատալոգների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

3.3. Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Ա. Դաշտոյանին մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ՀԱԱՀ բոլոր ստորաբաժանումներին ներկայացնել համալսարանի աշխատակիցների կարիքների գնահատման վերաբերյալ հարցման ձևանմուշը:

3.4. ՀԱԱՀ բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին.

- մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը կուրս կատալոգների լրացված ձևանմուշը ներկայացնել միջազգային կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանին,
- մինչև 2026թ. հունվարի 30-ը ՈԳԱ կենտրոն ներկայացնել համալսարանի աշխատակիցների կարիքների գնահատման լրացված ձևանմուշը:

4. ՀԱԱՀ ռազմավարական պլանի ներկայացման և գործողությունների պլան-ժամանակացույցի քննարկման հարցի վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

5. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի և խնդիրների վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

6. ՀԱԱՀ հիմնադրամի գիտական աշխատողների ատեստավորման կանոնակարգի հաստատման հարցի վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ Հիմնադրամի Գիտական աշխատողների ատեստավորման կանոնակարգը:

7. Աստղիկ Գագիկի Հովեյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ

ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ Աստղիկ Գագիկի Հովեյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կայուն տնտեսական զարգացման խնդիրները և դրանց լուծման ուղղությունները Հայաստանի գյուղական բնակավայրերի կենսունակության բարձրացման մոդելի կիրառմամբ» վերնագրով՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրաչյա Սերգեյի Ծպնեցյանին:

8. ՀԱԱՀ «Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտի» կանոնադրության հաստատման հարցի վերաբերյալ

Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտի» կանոնադրությունը:

9. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի հավանությանն արժանացած մի շարք հարցերի վերաբերյալ

9.1. Հաստատել Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի «Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն», «Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր», «Մեքենասարքավորումների ճարտարագիտություն», «Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ» կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները. 1-ին կիսամյակի «Հայոց լեզու», «Հայոց պատմություն» առարկաների ժամաքանակները հատկացնել «Մաթեմատիկա», «Ֆիզիկա» առարկաներին:

9.2. Հաստատել Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի «Պարենամթերքի տեխնոլոգիաներ»,

«Սննդամթերքի անվտանգություն», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները. 1-ին կիսամյակի «Հայոց լեզու», «Հայոց պատմություն» առարկաների ժամաքանակները հատկացնել «Քիմիա», «Ֆիզիկա» առարկաներին:

9.3. Հաստատել Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի «Կենսագիտություն և կենսատեխնոլոգիա», «Անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն» կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները. 1-ին կիսամյակի «Հայոց լեզու», «Հայոց պատմություն» առարկաների ժամաքանակները հատկացնել «Ընդհանուր քիմիա», «Կենսաբանություն» առարկաներին:

9.4. Հաստատել Ագրոնոմիական ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի «Ագրոէկոլոգիա», «Ագրոնոմիա, սելեկցիա, գենետիկա», «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Բույսերի պաշտպանություն», «Ջերմատնային ագրոտեխնոլոգիա» կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները. 1-ին կիսամյակի «Հայոց լեզու», «Հայոց պատմություն» առարկաների ժամաքանակները հատկացնել «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներին:

9.5. Հաստատել միջին մասնագիտական դուալ կրթական համակարգում «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտության ուսումնական պլանը:

9.6. Հաստատել ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի «Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում» մասնագիտության ուսումնական պլանում առաջարկվող փոփոխությունները:

9.7. «Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Ագրոմեխատրոնիկա և ճշգրիտ ռոբոտատեխնիկա» ՄԿԾ ուսումնական պլանով 1-ին կիսամյակում ընդգրկված «Գծագրական երկրաչափություն» առարկայի քննությունը 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում պիլոտային կարգով կազմակերպել բանավոր ձևաչափով, գնահատել արդյունքները և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան կանոնակարգային փոփոխություն:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՉԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ